

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ՏՀՏ-ՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԱՆՎՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական գործընթայիլ աշխատավայր

Բանադիր բառեր: Տեղեկատվական տեխնոլոգիաներ, ուսումնական նյութ, մեթոդ, ինտերակտիվ մեթոդ, գրույց, բանավեճ, համացանց, ինքնուրույն աշխատավայր, Blog, Wikipedia, Podcaster.

Ключевые слова: Информационные технологии, учебные материалы, метод, интерактивный метод общения, обсуждения, сетевые, самозанятость, Blog, Wikipedia, Podcaster.

Key words: information technologies, educational material, method, interactive method of communication, argument, internet, independent work, self-employment, Blog, Wikipedia, Podcaster.

R. Avetisyan

Роль и необходимость ИКТ в учебном процессе

Использование современных информационных технологий в учебном процессе меняет требования к образованию и позволяет студентам приобрести знания и навыки для того, чтобы суметь учиться самостоятельно.

Современный преподаватель должен быть знаком с преподаванием с информационными технологиями и владеть навыками работы с ними.

Новые технологии позволяют учащимся стать более независимыми в процессе обучения, их правильное систематическое использование повысит уровень знаний, сделает обучение более эффективным.

R. Avetisyan

The Role and Necessity of ICT in Educational Process

The use of modern information technologies in educational process changes requirements to education and allows students to acquire knowledge and skills to manage to study independently.

The modern teacher has to be familiar with teaching with information technologies and own skills of work with them.

New technologies will allow the students to become more independent in the course of training, correct systematic use of them will increase the level of knowledge making the learning process more effective.

Դասագործքացում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը ամրողությամբ փոխելով կրթությանը ներկայացվող պահանջները, հնարավորություն է տալիս ուսանողներին նաև և առաջ սովորել ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու հմտություններ:

Ժամանակակից դասախոսը պետք է ծանոթ լինի ուսուցման տեղեկատվական տեխնոլոգիաներին և ունենալ դրանցով գրագիտ աշխատելու հմտություններ:

Նոր տեխնոլոգիաների օգտագործումը ստվարություն հնարավորություն կտա ավելի ինքնուրույն և անկախ լինելու ուսումնառության գործքնացում, իսկ զուգադրումների համակարգված և ճշշտ օգտագործումը կրարձրացնի ուսուցման արդյունավետությունը և ստացած գիտելիքների մակարդակը:

Դասագործքացում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներառումը պայմանավորված է կրթական հաստատության տեխնիկական հազեցվածության աստիճանով, սարքավորումների զործուն վիճակով և տեղեկատվական համապատասխան բռվանդակությամբ: Տեղեկատվական տեխնոլոգիաներով աշխատելու պատրաստակամությունից և նախաձեռնությունից է մեծ մասամբ կախված նոր կրթության իրականացումը:

Յուրաքանչյուր տեղեկատվական տեխնոլոգիական նորույթ նվազեցնում է նախորդի կարևորությունը և հնարավորություն է տալիս ուսանողներին նաև և առաջ սովորել ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու հմտություններ:

Արդի ժամանակաշրջանում փոխվել են կրթությանը ներկայացվող պահանջները. իհմնարար գիտելիքներից և նոր գիտելիքների մշտական ձեռքբերումից բացի, ժամանակակից դասախոսը պետք է ծանոթ լինի ուսուցման տեղեկատվական տեխնոլոգիաներին և ունենալ դրանցով գրագիտ աշխատելու հմտություններ:

Տեղեկատվական տեխնոլոգիաներով ուսումնական միջավայրը նաև և առաջ պետք է ունենալ բավարար թվով սարքավորումներ, իսկ դասախոսական կազմը պետք է վերապատրաստված լինի և կարողանալ իր աշխատանքում հնարավորինս արդյունավետ օգտագործել այդ տեխնոլոգիաները:

Պատրաստի գիտելիքների յուրացումն ու ընդհանրացումը դառնում են ոչ թե մարդու մտավոր գարզացման նպատակը, այլ այդ գարզացմանը նպաստող օժանդակ միջոցներ:

Դասավանդման ժամանակ ուսուցման տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է՝

- դասի նկատմամբ հետաքրքրության աճին և ավելի հեշտ ընկալմանը, մտապահմանն ու դասի վերարտադրմանը,
- ըստ սովորողի նախասիրության՝ տեղեկատվության որոնման և փոխանցման հնարավորության աճին,
- սովորողների ստեղծագործական ուսուցումների և ուսուցման ակտիվ մեթոդների գարզացմանը,
- կրթության անընդհատությանը և շարունակականությանը և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Ուսումնական նյութի որոնման, հաղորդման և յուրացման արդյունավետության բարձրացումը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվելու է.

1. առավել դյուրըմբռնելի ժամանակակից համակարգչային ծրագրերով տարբեր առարկաների ուսուցմամբ,

2. էլեկտրոնային գրադարանների ստեղծմամբ, արտադասարանային գործունեության կազմակերպմամբ,

3. ուսուցման նոր ձևերի ակտիվ ներգրավմամբ, ուսումնական նյութի առավել գրավիչ և հետաքրքրի ներկայացմամբ,

4. ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողների մասին տվյալների կուտակման և աշխատանքի արդյունավետության բարձրացմամբ:

Նորագոյն տեխնոլոգիաները կրթության կազմակերպման գործընթաց են ներբերել հնոավար ուսուցման բաղադրիչներ՝ էլեկտրոնային փոստեր, սոցիալական զանազան ցանցեր, հնոավար ուսուցման համար նախատեսված ծրագրեր:

Ուսուցման նոր մեթոդները նոր պահանջներ են ներկայացնում. հիմնական կարողություններից բացի, նրանք պետք է ունենան համագործակցության և հաղորդակցման հմտություններ, պետք է կարողանան օգտագործել ուսուցման տեխնիկական միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործում:

Ուսուցման մեթոդները ուսուցման էությունից բխող այն միջոցառումներն են, գործունեության ձևերն ու նյութակները, որոնցով իրականացվում է համագործակցությունը: Գիտելիքների հաղորդումը պահանջում է նոր մեթոդի կիրառություն, և հենց ուսուցման մեթոդներն են լուծում. ինչպես սովորեցնել խնդիրը:

Մեթոդի ընտրությունը շատ կարևոր է, քանի որ ճիշտ ընտրված մեթոդը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնելու ուսուցման գործընթացը:

Մանկավարժական պրակտիկայում լայն տարածում են գտնել ինտերակտիվ մեթոդները: Ինտերակտիվ մեթոդի էությունն այն է, որ տեղի է ունենում գիտելիքների, մտքերի փոխանակում: Ինտերակտիվը բացառում է որևէ տեսակետի գերակայությունը մյուսների նկատմամբ: Դասերի ընթացքում կազմակերպվում են թիմային աշխատանքներ, կիրառվում են հետազոտական ծրագրեր, քննարկումներ, դերային խաղեր, փաստաթղթերի և սկզբնադրյուրների հետ աշխատանք, ստեղծագործական գործունեություն և այլն:

Ժամանակակից պայմաններում նորագոյն ուսուցման տեղեկատվական տեխնոլոգիաների, ավանդական և ինտերակտիվ մեթոդների գործակցությամբ առաջացած դասընթացի կառավարման բազմաթիվ մեթոդներ կան: Ինքնուրույն աշխատանքը համարվում է հատուկ միջոց, որը հնարավորություն է տալիս կազմակերպելու և կառավարելու ուսանողների ինքնուրույն աշխատանքը ողջ ուսումնառության գործընթացում, միջոց է ուսանողների ինքնակազմակերպման և ինքնակարգապահություն տիրապետելու համար [2, էջ 338-339]:

Ինտերակտիվ գործիքների միջոցով իրականացվող ուսուցումն ունի նմանություններ դասավանդման սովորական նյանակների հետ՝ պարապմունքի հաջող անգաման հիմքերը նույն են, անկախ այն տեխնոլոգիաներից և սարքավորումներից, որոնք օգտագործում է դասավանդողը [3, էջ 13-14]: Յանկացած պարապմունք պետք է ունենա հստակ պլան և կառուցվածք, պետք է հասնի որոշակի նպատակների և արդյունքների: Այդ ամենը ուսանողներին օգնում է ավելի լավ հասկանալ մատուցվող նյութը և հարաբերել այն նրա հետ, ինչը նրանք արդեն գիտեն:

Այսօր բազմաթիվ մեթոդական նորարարություններ կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Դրանցից առավել արդիականներն են՝

I. **Դասախոսությունները:** Դասախոսությունը՝ որպես դասավանդման ավանդական մեթոդ, ամենալայն տարածում ունեցող ձևն է ներկայի լուսական նոր տեղեկատվություն կամ դասընթացի ընդհանուր գաղափար ներկայացնելու ամենից արդյունավետ նղանակն է: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով դասավանդելիս կիրառվում է ցուցադրումներով դասախոսությունը, որտեղ ընթացքում մեկնաբանվում են էկրանին ցուցադրվող նյութերը: Այս մեթոդով աշխատանքի ընթացքում լսարանային միջավայրը հետաքրքիր դարձնելու հնարինությունը հանգույցային մասերը տարբեր տեսապատկերներով զուգորդելը: PowerPoint ծրագրով պատրաստված թափանցաթաղանթների վրա գրառումները լրացնուիլու խթան են՝ ուսուցումը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու հարցում:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով իրականացվող դասախոսություններն ունեն առավելություններ՝

1. Ժամանակակից տեխնիկական միջոցների առկայությունը դասախոսության ժամանակ, դասավանդողի դերի գերակշռմամբ պայմանավորված, չի ծնում այնպիսի ձանձրակի, պասիվ միջուրուտ, ինչպես՝ ավանդական դասախոսության դեպքում,

2. Սովորողներն ավելի հեշտությամբ են ինտեգրվում ուսուցման գործընթացին, քան ավանդական դասախոսության դեպքում,

3. Նյութական ավելի լավ է ընկալվում:

II. գրույցը: Դասավանդումն իրականացվում է համացանցի ակնթարթային գրույցարանների կիրառումով:

Զրոյցը մեթոդ է, որի կիրառման պարագայում դասավանդողը վարպետորեն առաջադրված հարցների միջոցով ակտիվացնում է արդեն ունեցած գիտելիքներն ու կարողությունները և միում նոր գիտելիքների ձնորդելմանը՝ նրանց կողմից արված դատողությունների, եզրահանգումների ու ընդհանրացումների ճանապարհով:

Այն նպատակ ունի զարգացնելու բանակը խոսքը, հաղորդակցական հմտությունները և անմիջականորեն կառավարելու իմացական գործունեությունը, ընդլայնելու մտահորիզոնը:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով դասավանդելիս գրույցն ունի առավելություններ՝

□ զարգացնում է սովորողի ստեղծագործական, վերլուծական մտածողությունը, որը նպաստում բարդ իրավիճակներում լուծումներ գտնելու ունակության զարգացմանը: Ուսանողներն իրենց բազային գիտելիքների, արժեքային համակարգի, զգացողությունների հիման վրա վերլուծում են այլոց փորձառությունը և կատարում նոր եզրահանգումներ,

□ զրոյցի էության բովանդակալից ներկայացնումը հնարավորություն է տալիս կատարելու առաջնային և երկրորդային փաստերի տարանջատում, նպաստում է հետաքրքրվածության, ուսուցման ինտերակտիվության աճին,

□ զարգացնում է տեղեկատվության հետ աշխատելու կարողություններ:

III. բանավեճը: Դասավանդումն իրականացվում է մուլտիմեդիային դասասենյակում, համացանցի կիրառումով:

Բանավեճը համարվում է քննադատական, վերլուծական մտածողության ձևավորման ամենաարդյունավետ մեթոդներից մեկը: Բանավեճի բուն ընթացքում դասավանդողը պասիվ դերակատարում ունի: Նա հիմնականում գրանցում է կարևոր մտքերը և հետևում բանավեճի կանոնների (ակտիվ լսել, ընդհատել, պաշտպանել դիրքորոշումը, թույլ չտալ բանավեճը վիճաբանության վերածվի և այլն) պահպանմանը:

IV. տեղեկատվության որոնման և հայտնագործման մեթոդը: Կարևորվում է ստեղծագործական ուսուցումը: Նոր տեղեկույթը և նրա հիմքում ընկած տեսությունն աստիճանաբար բացահայտվում և յուրացվում է սովորողի կողմից, համացանցի, հանրագիտարանի և համակարգչի փոխներգործության ընթացքում՝ պահպանելով միջառարկայական կապերը:

Մեթոդն արդյունավետ է նոր նյութ սովորելու համար, որը կարող է լինել ծավալուն, պարունակելի բարդ գաղափարներ, դժվար ըմբռնելի տեխնիկներ և հասկացնություններ:

Դասավանդումն զանկալի է անցկացնել մուլտիմեդիային դասասենյակում համացանցի կիրառմամբ:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով դասավանդելիս տեղեկատվության որոնման և հայտնագործման մեթոդի առավելություններն են՝

□ սովորողին հնարավորություն է տալիս ավելի խորությամբ յուրացնելու նյութը,

□ սովորողին հնարավորություն է տալիս համադրելու իր գիտելիքներն ու հմտությունները,

□ օգնում է սովորողին զարգացնելու վերլուծական, ստեղծագործական մտածողությունը:

V. ուսումնական նախագծերում դնդարկման մեջողը: Այն առաջարկում է ավելին, քան ավանդական կրթության շրջանակը: Ընդգրկվելով ուսումնական այս կամ այն նախագծում՝ սովորողները սովորում են հետազոտություններ կատարել, տեղեկատվություն որոնել ու գտնել, տեսակավորել, գտնել, համակարգել ու վերլուծել այն, իսկ համակարգչով աշխատելիս համակարգված ու հստակ ձևակերպել իրենց մտքները, գրավոր ստանալ ու առաքել մեծ քանակությամբ տեքստային, թվային և գրաֆիկական տեղեկատվություն, վերլուծել ստացված տեղեկատվությունը, նոր մտքեր ու գաղափարներ առաջարկել:

Այս մեջողով ուսուցման ընթացքում առաջնային նպատակը սովորողի ինքնազարգացումը խթանելն է՝ նոր փորձ ձեռք բերելու, գիտելիքները որոշակի իրավիճակներում կիրառելու հնարավորությունների ստեղծման միջոցով: Ուսումնական նախագծերում ընդգրկման միջոցներից են՝

1. Blog-ները: Blog-ը ինքնարտահայտման և ինքնարդրության միջոց է, որը մարդկանց թույլ է տալիս ներկայանալ համազանցում, սկսել քննարկումներ, հավաքել կարծիքներ և այլն: Blog-ում տեղադրված թեմաները թերապելում են հեղինակի կողմից, այդ պատճառով էլ շատ բազմազան են և դրանց մի մասը դարձել է տեղեկատվության վատահենի աղբյուր, իսկ մյուս մասը՝ տեղեկատվություն տարածելու և հետադարձ կապ ապահովելու գործիք: Շատ Blog-ներում ընթերցողները հնարավորություն ունեն տեղադրելու մեջնաբանություններ, ներգրավվելու քանավեճերում: Blog-ները կարող են հրումներ պարունակել դեպի այլ Blog-ներ:

2. Viki-ները: Համացանցում ստեղծված WEB էջեր են, որոնք հնարավորություն են ընծեռում ընթերցողներին շփվելու և համագործակցելու, քանի որ այդ էջերի բովանդակությունը կարող է խմբագրվել կամ ավելացվել ցանկացած անձի կողմից: Փոփոխումը և լրացնումը կատարվում են Viki-ի կայքերի տրամադրած հարմարավետ գործիքների օգնությամբ: Viki-ները տարբեր համալսարանների և երկրների սովորողների միջև ստեղծում են համատեղ ծրագրեր իրականացնելու հիանալի հնարավորություն: Viki-ն կարենի է օգտագործել խմբակային գրավոր աշխատանքներ կատարելու համար: Viki-ների ամենահայտնի օրինակը համատեղ ուժեղություն ստեղծված Wikipedia հանրագիտարանն է:

3. Podcaster-ը: Համացանցային կայք է, որը սովորողի կողմից ստեղծված ուսումնական նյութը ավելի ընդարձակ շրջանակներում տարածելու նյանակ է: Համացանցից, բարձրախոսից, տեսախցիկից և սովորական համակարգչից օգտվելու հնարավորություն ունեցող յուրաքանչյուր անձ կարող է ստեղծել Podcast և այն հասանելի դարձնել ցանցում: Կարենի է Podcaster-ին բաժանորդագրվել այնպես, որ նրանք ինքնարդրաբար նորացվեն համակարգչում կամ շարժական սարքում: Այդ կերպ կարենի է մշտապես ստանալ նոր ստեղծվող և թարմացվող հեռարձակվող լսատեսողական նյութեր:

Blog-ների, Viki-ների և Podcaster-ի ուսումնական գործընթացում կիրառման առավելություններն են՝

- սովորողներին հնարավորություն են տալիս վերահսկելու իրենց ուսուցման գործընթացը,
- նորույթ են և տալիս են ինքնարտահայտման հնարավորություն: Այս հանգամանքը կարող է օգտագործվել որպես տարատեսակ առարկաներ ուսուցանելու գործիք,

□ յուրաքանչյուր սովորողի հնարավորություն են տալիս մասնակցելու տարբեր տեսակետներ առաջարկող քննարկումներին, խթանում են ստեղծագործական գործունեությունը, համագործակցությունն ու հաղորդակցությունը:

Դասավանդման մեջողի ընտրության վրա առավել ազդող գործուներից են՝

- ուսուցման նպատակներն ու ուղղվածության տեսակը,
- ուսուցման կազմակերպման պայմանները, ուսումնական նյութի բովանդակությունը, քանակը և ժամաքանակը,

□ առկա ուսումնական նյութատեխնիկական բազան, ուսումնական դասընթացի տեսակը (դասախոսություն, գործնական, լաբորատոր):

Ծվարկված բոլոր մեթոդներում էլ առկա է ինտերակտիվությունը, որը նպաստում է ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Այսպիսով տեղեկատվական տեխնոլոգիաներով դասավանդելիս կարենի է իրականացնել հետևյալ մեթոդական հնարքները.

- անցում սովորողի կողմից նյութը ինքնուրույն յուրացնելուն,
- լսողական ընկալումից անցում տեսողական ու լսողական ընկալման ինտեգրմանը:
- միջառարկայական կապերի իրացնում, որը նպաստում է ստեղծագործական ուսումնառությանը, կրթության կազմակերպումը տարածության մեջ՝ ուսուցման գործընթացում ընդգրկելով տարբեր քաղաքների, երկրների սովորողներին,

Ուսուցման գործընթացի հավասարաչափ տարածումը ժամանակի մեջ՝ դասավանդվող նյութի մի մասը տեղափոխվելով Blog-ային տարածք, և կազմակերպելով լրացուցիչ արտալսարանային բնարկումներ դասախոսությունների միջև ընկած ժամանակահատվածում,

Ուսուցման գործընթացի հավասարաչափությունը կազմակերպում, որը լրացուցիչ հետաքրքրություն է առաջացնում ուսումնակարգով նյութի նկատմամբ:

Ուսումնական ամբողջ նյութի հասանելիությունը սովորողներին հնարավորություն է տալիս ավելի ինքնուրույն և անկախ լինելու ուսումնառության գործընթացում, վոլյուում է ինչպես սովորողի, այնպես էլ դասախոսի վարքագիծը:

Այսպիսով, ուսուցման գործընթացում ցուցադրումների համակարգված և ճիշտ օգտագործումը կնպաստի դիդակտիկ նյութերի օգտագործման մակարդակի բարձրացմանը, ուսուցման արդյունավետությանը, միջառարկայական կազմերի իրագործմանը, սովորողների ձեռք բերած գիտելիքների մակարդակի բարձրացմանը՝ դասախոսի կողմից ուսումնական նյութի տրամաբանական մատուցման շնորհիվ:

Գրականություն

1. Хорева Л.В., Коротеева О.С. Развитие новых методов обучения на базе информационных технологий. Электронный учебно-методический журнал СПбГУЭиФ. ФИНЕК СПб, 2008.
2. Ուսանողների ինքնուրույն աշխատանքը կրնդիտային համակարգում., Առաջամաշակում Վ.Վ., Ավելիխան Ռ.Վ., Միջազգային գիտաժողովի նյութեր. Նվիրված ԱրՊԿ-ի հիմնադրման 40-ամյակին. Ստեղ. 2009թ էջ 338-339:
3. Интерактивные технологии в образовании. Учебно-методический комплекс. М., 2005.21 с
4. Пустыльник П.Н., Эмирова А.Е. Обоснование необходимости инноваций в вузе с целью повышения конкурентоспособности на рынке образовательных услуг. Электронный учебно-методический журнал СПбГУЭиФ. ФИНЕК СПб, 2009.
5. Волошинова М.В., Гордин В.Э. Инновационные системы и технологии в учебном процессе. Электронный учебно-методический журнал СПбГУЭиФ. ФИНЕК СПб, 2010.

Տեղեկությունների հեղինակի մասին.

Ուսուցչական գործընթացի համակարգում առաջարկած առաջարկական մաթենմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն

E-mail: varustamyan@rambler.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել լսմբագրական կոլեգիայի անդամ, Փ.Մ. գ.դ., Ա.Մ. Խաչատրյանը: